


Պրակտիկա բայուր յարկը պետք է պահպան
ԱՆԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺԻՆ

ԳՅՈՒՂԻՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՈՒՇԱՏԵՏՐԸ
ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ՊԵՏՎՐԱԾ
ՅԵՐԵՎԱՆ
1 9 3 3

20 MAR 2013

39 645

352
9-68 4

01 MAR 2013

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

ԳԱՐՆԱՑԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

....Բանը միայն խորհուրդները չեն, վոր կազմակերպության մի ձեն են, թեև այդ ձեռքը հեղափոխական մեծագույն նվաճում և հանդիսանում:

Բանն ամենից առաջ խորհուրդների աշխատանքի բովանդակությունն ե, խորհուրդների աշխատանքի բնույթը. բանն այն ե, թե ովքե՛ք են դեկավրում խորհուրդները—հեղափոխականնե՞րը, թե՞ հականեղափոխականները» (Ընկ. Ստալինի՝ հումկարյան միացյալ պիտույքում արտասանած հանդից):

595
38

24/7/6

Գյուղխորհուրդն իր իրավասության տակ դտնվող տերիտորիայի սահմաններում հանդիսանում ե Խորհրդային իշխանության բարձրագույն մարմինը, ուստի և նրա վրա ամենից առաջ պարտականություն ե գրվում վովին ողտագործելու իր իշխանությունն ու հնարավորությունները՝ գյուղատնտեսությունը բարձրացնելու, գյուղատնտեսության սոցիալիստական ձևերն ամրացնելու ու զարգացնելու համար:

Գյուղխորհուրդն իր իրավասության տակ ծում ամենակարևոր և ամենավճռական մոմենտը գյուղատնտեսական կամպանիաներն են, ուստի և գյուղխորհուրդների վրա յեղընդում այդ կամպանիաները հաջող անցկացնելու

պատասխանատվությունը, մասնավորապես՝
1933 թ. գարնանացանի պլանը կատարելու և
գերակատարելու պատասխանատվությունը:

Ի՞նչ պետք է իմանա և ի՞շխ գյուղխոր-
հուրդն այդ կամպանիան անցկացնելիս:

Գյուղխորհուրդը պետք է իմանա և լավ
իշխ հետեւյալը.

Առաջին՝ վոր առաջիկա գարնանացանի
կամպանիան յերկրորդ հնգամյակի առաջին
տարվա կամպանիան է, սկիզբն այն մեծագույն
աշխատանիների, վորոնի պետք է կատարվեն
յերկրորդ հնգամյակի ընթացքում, վորպեսզի
այդ հնգամյակի վերջում մենք հասնենք դա-
ստիքերի լիակատար վոչնչացմանը ԽՍՀՄ-
ում և ամեն տեսակի շահագործման վոչնչաց-
ման:

Գարնան գյուղատնտեսական կտմանիան
հաջող անցկացնելուց շատ բան է կախված:
Դրանից ե կախված, մասնավորապես՝ այն,
թե վորքան հաջողությամբ կկատարենք մենք
յերկրորդ հնգամյակի առաջին տարիվա պլանը
և վորքան արագ և մճուականորեն առաջ կը գ-
նանք դեպի մեր նպատակը՝ դեպի անդաստ-
հարդ սոցիալիստական հասարակության
ստեղծումը:

Յերկրորդ՝ վոր պետք է հիշի գյուղխոր-
հուրդն—այդ այն ե, վոր սոցիալիզմի կառու-
ցումը գյուղում ընթացել ե և դեռ ընթանա-
լույնք (ժանավանդ Անդրկովկասյան գյուղում)
դասակարգային կատաղի պայքարի պայման-

ներում, և վոր առաջիկա գարնանացանի կամ-
պանիան լինելու յե մի մեծ դասակագային
նակատամարտ՝ սոցիալիստական գյուղատըն-
տեսության համար, բերքատվությունը բարձ-
րացնելու և անասունների բիվը նորանոր
հազարներով ավելացնելու համար:

Թեև կուլտակը ջախջախված է, բայց դեռ
վերջնականապես լուսացված չե և դեռ շարու-
նակում և դիմադրել մեր գյուղի սոցիալիստա-
կան գարգացմանը:

Կուլտակը խորամանկ և ճարպիկ թշնամի
յե, նա «հասկացել ե գյուղում ստեղծված նոր
կարգերի ուժն ու հզորությունը և փոխակերպ-
վել, հարմարվել ե, փոխել ե իր գործելակեր-
պը, անցնելով կոլտնտեսությունների դեմ ուղ-
ղակի հարձակում գործելուց գալտնի ու քո-
ղարված աշխատանիքի» (Ստալին):

Լինելով կոլխոզում կամ խորհրդում, կու-
լտակը չարաշահում է մեր ժամանակավոր ուրժ-
վարությունները, գյուղխորհրդի կամ կոլտըն-
տեսության վարչության թույլ տված ամե-
նափոքը սիսալները։ Նա ոգտագործում է
կոլտնտեսականների մանր—սեփականատիրա-
կան տրամադրությունների մնացորդները, ա-
գիտացիա յե անում և կազմակերպում հացա-
մթերումների, ցանքի, ինչպես և կուսակցու-
թյան ու կառավարության կողմից գյուղում
անցկացվող այլ շատ կարեոր ձեռնաբարկումների
նենդադուլը (սարստած)։ Նա վնասարարու-
թյուն և կազմակերպում կոլտնտեսություն-

ներում, խորհանտեսություններում և Մ. Տ.
կայաններում, ազիտացիա յեւ անում հափշտա-
կելու կոլտնտեսային և խորհանտեսային գույ-
քը, կազմակերպելով գողություններ, վատ-
նումներ և այլն:

Այս և սրա նման ուրիշ քայլայիչ աշխա-
տանքներ կուլակը կատարում եւ ինքը կամ իր
գործակախների՝ այն գյուղացիների միջոցով,
վորոնք թեև իրենից պակաս ունեոր են, բայց
գտնվում են նրա ազդեցության տակ:

Եերբորդ—և ամենակարենորը, վոր պետք
հիշի գյուղխորհուրդը, այդ այն ե, վոր այժմ,
յերբ առաջին հնդամյակի հետեւանքով գյու-
ղանտեսության սոցիալիստական ձեւերը
(Կոլտնտեսությունները, խորտնտեսություն-
ները, մեքենա—տրակտորային կայանները)
տիրապետող դիրք են դրավու Անդրկովկայան
գյուղում, յերբ Անդրկովկասի գյուղատնտե-
սությունը զինված եւ մեծաթիվ մեքենաներով
և յերբ փայլուն տրակտորների բազմաթիվ շա-
րաններն ակոսում են Անդրկովկասի զաշտերը,
—այժմ գյուղում կատարվող աշխատանքի
և գյուղի զեկավարության գլխավոր ինդիրն
այն ե, վոր բայլշենկորեն, հեղափոխականո-
րեն կազմակերպվի և գլխավորվի կոլտնտեսա-
կան մասսաների և աշխատավոր մենատնտե-
ների ակտիվությունը և աշխատանքային
ստեղծագործական խանդամատությունը (են-
տուզիազմը) և այդ ակտիվությունն ուղղվի

դեպի տնտեսական և քաղաքական կամպանիա-
ների հաջող կիրառումը գյուղում:

Գյուղխորհուրդը պետք է հիշի, վոր առա-
ջիկա գարնանցանի կամպանիայի հաջողու-
թյունը շատ և շատ բանում կախված է իր աշ-
խատանքի վորակից և բնույթից, իր դեկա-
վարության վորակից, նրա դասակարգային
մարտունակության աստիճանից, այն բանից,
թե վորքոն շուտ և վճռականորեն կկարողանա-
գյուղխորհուրդը մերկացնել կուլակի և յեն-
թակուլակների զաղըելի դավիրը:

Գյուղխորհուրդը պետք է հիշի ընկ. Ստա-
մենի խոսքերը, թե

«Ինքնահոսն այժմ ամելի, քան յերեկիցե,
վտանդավոր և գյուղատնտեսության զար-
դացման գործի համար: Ինքնահոսն այժմ
կարող է կործանել ամբողջ գործը»:

Դարնանացանի կամպանիան նախապատ-
րաստելու և անցկացնելու գործը կանոնավոր
կերպով դեկավարելու համար գյուղխորհուր-
դը պետք է լավ հասկանա, լավ պարզի իր
համար այն, թե առաջիկա զարնանացանի
կամպանիայի հիմնական խնդիրն ի՞նչ է:

Գարնանացանի կամպանիայի հիմնա-
կան խնդիրն այն ե, վոր պետք է լավ
յարացնել այն արդյունեները, վոր մենք
անոնք ենք քերել առաջին հեգամյակի հե-
տեւանելով: Իսկ չորս տարում կատար-
վոծ հնդամյակի հետեւանքով մենք ձեռք ենք
բերել շատ խոշոր արդյունքներ: չորս տարում

մենք ընդարձակել ենք տեխնիկական կուլտուրաների ցանքսի տարածությունը 200,000 հեկտարով։ չորս տարում Անդրկովկասի գյուղացիական տնտեսությունների ավելի քան 400/0-ը միավորված են կոլտնտեսություններում։ չորս տարում կազմակերպված ե մոտ 340 խորհութեանտեսություն, 52 մեքենա-տրակտորային կայան, վորոնք ընդգրկում են Անդրկովկասի Հիմնական գյուղատնտեսական ռայոնները։

Խնդիրն այժմ այն է, վոր պետք է ամրապնդել այդ բոլոր հաջողությունները, այսինքն՝ կազմակերպչորեն ու տնտեսապես ամրացնել կոլտնտեսությունները, խորհութանառությունները և մեքենա-տրակտորային կայանները, բարձրացնել մեր դաշտերի բերքատվությունը, բարելավել անասունների վիճակը և պայքարի անասունների թիվը նորանոր հազարներով ավելացնելու համար։

Այս ե հիմնական խնդիրը գյուղատնտեսության ասպարիզում և այդ խնդրի լուծումը հիմնականում պետք է ապահովված լինի հենց առաջիկա գարնանացանի կամ պահանջին։

ԻՍԿ Ի՞՞ՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԻ ԳՅՈՒՂԵՐԸ ՀՈՒՐԴԱՐԴԱՐ, ՎՈՐՊԵՍԶԻ ԱՊԱՀՈՎԻ ԱՅԻ ԽՆԴՐԻ ՀԱԶՈՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Դյուղխորհուրդը, իբրև իշխանության քարձագույն մարմին՝ իր տերրիտորիայի սահմաններում, պետք է իրապես դեկավարի գյուղի ամբողջ տնտեսա-ֆալաքական կյանքը։

Դրա համար գյուղխորհուրդը պետք է մանրագրենին կերպով ուսումնակիրի իր շրջանն ամեն կողմից, պետք է լավ ճանաչի իր յուրաքանչյուր արտադրական տեղամասը, պետք է իմանա, թե ինչքան կահույք (գյուղ-գործիքներ և այլն), ինչքան լծկան անասուն կա, ինչպես են նրանց վիճակը, նա պետք է ծանոթ լինի յուրանշյուր կոլտնտեսության վիճակին, նրա կարիքներին և քույլ կողմերին, պետք է իմանա աշխատավոր մենատնտեսմերի կարիքները, հաշվի առնի յուրաքանչյուր կուլակի և յենքակուլակի և այլն։

2. Կուսակցությունը և բանվոր գասակարգը պահանջում են գյուղխորհուրդից, իբրև պրոցեսարիատի գիլտատուրայի որդանից, կազմակերպելու վճռական գրոհ կուլակության դեմ, անխնա կերպով արմատախիլ անի կուլակային սաբոտաժը՝ ուղղված ցանքի և նրա հետ կապված նախագատրաստական աշխատանքների դեմ։

Այդ աշխատանքը կարող է հաջողությամբ կատարել գյուղխորհուրդը միայն հենվելով կոլտնտեսական, կոմյերի տական և կանանց ակտիվիի, գյուղի բատրակա-չքավորական և միջակ մասսաների վրա։

Գյուղխորհուրդը պետք է ամենորյա համառաջխատանք կատարի աշխատավոր մենատնտեսների մեջ՝ նպատակ ունենալով վերադաստիարակել նրանց սոցիալիստական վորդով, բացառիկ նրանց կոլտնտեսական արտադրության

նշանակությունն ու առավելությունները, և
այդ հիմունքով ներգրավի նրանց կոլտնտե-
սությունների մեջ, այդ աշխատանքը կապելով
աշխատավոր մենատնտեսներին կազմակերպ-
չական-արտադրական լայն ոգնություն ցույց
տալու աշխատանքի հետ:

3. Գյուղվարհուրդը պետք է հիշի, վոր
անցյալ գյուղատնտեսական կամպանիաների
խոչորագույն թերությունը յեղել է այն միան-
վամայն անբավարար ուշադրությունը, վոր
ցույց են տվել շրջանային և գյուղական կազ-
մակերպությունները գեղի չքավոր ու միջակ
մենատնտեսը:

Անդրկովկասի պայմաններում մենատըն-
տեսը դեռ ևս մեծ դեր է խաղում գյուղատըն-
տեսության մեջ: Ուստի և գյուղվարհուրդները
առաջիկա գարնանացանի կամպանիայի ժա-
մանակ պետք է ոգնեն աշխատավոր մենատըն-
տեսներին՝ կազմակերպել իրենց արտադրու-
թյունը, բարձրացնել այդ արտադրության վո-
րակը, պետք է ապահովեն՝ կառավարության
կողմից աշխատավոր մենատնտեսների վրա
դրված պարտավորությունների կատարումը՝
ցանքի, բերքատվությունը բարձրացնելու
գծով, ինչպես նաև ապահովեն պետությանը
հանձնվող գյուղատնտեսական արտադրանքի
որենքով սահմանված նորմերի կատարումը:

4. Կորհուրդների մարտական խնդիրն է
կոլտնտեսությունների բայլչեկորեն ծավալ-

վող կազմակերպական-տնտեսական ամրացու-
մը:

Իսկ ի՞նչ պետք է անի գյուղխորհուրդն
այդ ուղղությամբ:

Սուազինը՝ ղեկավարել ու ոգնել կոլտնտե-
սություններին իրենց արտադրական պլանը
կազմելու գործում և հասցնել այդ պլանն ա-
ռանձին բրիգադիրներին և բրիգադավարնե-
րին:

Յերկրորդ՝ ձգտել և հասնել աշխատանքի
արտադրողականության բարձրացմանը կոլ-
տնտեսություններում: Դրան կարող է հասնել
գյուղխորհուրդը՝ կոլտնտեսություններում
աշխատանքային կարգապահությունը ամրաց-
նելու, բրիգադային աշխատանք սահմանելու,
աշխատանքն աշխորերով գնահատելու, աշխա-
տանքը հաշվառման յենթարկելու, «համաս-
րեցումը» (ուրավնիլովկան) վերացնելու միջո-
ցով և այլն:

Յերրորդ՝ պատրաստել և ստուգել բրիգա-
դավարների, հաշվառում կատարողների, աշ-
խատանքի կազմակերպիչների և այլն կադրերը:
Ոգնել կոլտնտեսություններին, վոր հենց այժմ
կազմվի կոլտնտեսական արտադրության աշ-
խատավորների հիմնական կորիգ, կցելով
նրանց արտադրական տեղամասերին և այլն:

Ողնելով և ղեկավարելով կոլտնտեսական
արտադրությունը, գյուղխորհուրդը պետք է
հիշի ընկ. Ստալինի հետեւյալ խոսքերը.
«Կոլտնտեսությունները, վորպես տըն-

տեսության կազմակերպման սոցիալիստական ձև, կարող են տնտեսական շինարարության հրաշքներ ցույց տալ, յեթե նրանց գլխին կանգնած են իսկական հեղափոխականներ, բայց չեկներ, կոմունիստներ։ Յեվ, ընդհակառակը, կոլտնտեսությունները կարող են վորոշ ժամանակաշրջանում վարագույր դառնալ ամեն տեսակի հակահեղափոխական արարքների համար, յեթե կոլտնտեսություններում գործի գլուխ անցնեն եսերներն ու մենչեւին ները, Պետլյուրայի սպաները և այլ գվարդիականներ, նախկին դենիկինականները և կոլչակականները»։

Ըսկ. Ստալինի այդ ցուցմունքը պետք է ծառայի գյուղխորհորդի համար իրեւ գործողության լայն ծրագիր՝ կոլտնտեսության քաղաքական ամրապնդման համար մղվող պայքարում։

Դաստիարակելով ամուր բայց չեկյան կոլտնտեսական ակտիվ և հենվելով այդ ակտիվի վրա, գյուղխորհորդները պետք են վճռականորեն մաքրեն կոլտնտեսությունները կուլակային և ամեն տեսակի հակահեղափոխական վնասարար տարրերից, մենչեւիներից, դաշնակեներից և մուսավաթականներից, պետք է ամենորյա աշխատանք կատարեն կոլտընտեսական մասսաների մեջ, նպատակ ունենալով նրանց վերադաստիարակել սոցիալիստական վողով, պետք է ծավալուն պայքար մղեն

կոլտնտեսության մեջ մեծամասնությանը նվաճելու, իսկական բայց եկիցյան կոլտնտեսություններ ստեղծելու համար։

5. Գյուղխորհորդը չպետք է աչքաբող անի նաև խորտնտեսություններն ու մեքենա—տրակտորային կայանները։ Զմիջածտելով խորհոնտեսությունների Մ. Տ. Կ.-ների վերատեսուչների (վարչությունների) ոպերատիվ Փունկցիաներին, գյուղխորհուրդները պետք է ամենայն ոգնություն ցույց տան խորանտեսություններին ու ՄՏԿ-ներին՝ նրանց պլանը կազմելու, աշխատանքները կազմակերպելու գործում, համաձայնընկ. Ստալինի վեց ցուցմունքների, և միաժամանակ պետք է հատուկ ուշագրություն դարձնեն՝ խորհոնտեսությունների և կոլտընտեսությունների միջև պայմանագրեր կնքելու և բանվորական ուժ հավաքադրելու աշխատանքին։

Խորհոնտեսությունները և ՄՏԿ-ները քաղաքանապես և կազմակերպորեն ու տընտեսապես ամրացնելու, խորհոնտեսությունների և ՄՏԿ-ների քաղաքական կազմակերպարտնտեսական դերն ու աղդեցությունը գյուղում ու կոլտնտեսություններում բարձրացնելու նպատակով Համկոմկուսի (բ) կենտկոմի և կենտ. վերահսկիչ հանձ. Հունվարյան պլենումի վորոշմամբ բոլոր խորհոնտեսություններում և ՄՏԿ-ներում կազմակերպվում են քաղբաժիններ։

Այդ քաղբաժինների հիմնական խնդիրն այն է, վոր ծավալելով քաղաքական մասսայական աշխատանք կոլտնտեսություններում և խորհանտեսություններում և անխնա կերպով մերկացնելով ու արմատախիլ անելով կոլտընտեսություններում, խորհանտեսություններում և ՄՏԿ-ներում նկատվող թափթփվածությունը, փնթիությունը, անփույթ վերաբերմունքը գեղի արտադրությունը, վնասարարությունը, ապահովեն կոլտնտեսությունների, խորհանտեսությունների և ՄՏԿ-ների կազմակերպական—տնտեսական ամրապնդումը, ապահովեն սրանց պլանների, ինչպես և սրանց կազմից պետության առաջ հանձն առած պարտավորությունների կատարումը:

Դյուղխորհուրդները պետք են մասսայական աշխատանք ծավալեն ՄՏԿ-ների և խորհանտեսությունների քաղբաժինների կազմակերպման շուրջը և, համաձայնեցնելով այդ աշխատանքը նրանց հետ, ամեն կերպ աջակցեն քաղբաժիններին՝ հաջողությամբ իրագործելու նրանց առաջ գրված խնդիրները:

6. Առաջիկա կամպանիայի հաջողարդությունը, վորպես հիմնականում արտադրության վորակի, բարձր բերքի համար տարվող կամպանիայի, ամբողջովին կախված է նախապատրաստական ձեռնարկումները ժամանակին և լիովին իրագործելուց:

Դյուլխորհուրդի մարտական խնդիրն են

ապահովել այդ ձեռնարկիումների կիրառումը սահմանված ժամկետներին, այն են

Մինչև վետրվարի 15-ը՝ հասցնել գարնանացանի կամպանիայի պլանները կոլտնտեսություններին և հանձնել յուրաքանչյուր մենատոնտեսի ցանքի կայուն պլան:

Մինչև վետրվարի 15-ը վերջացնել սերմ-Փոնդի և ապահովագրական Փոնդի հավաքումը, ինչպես նաև տեսակավոր սերմացուի ընտրումը և սերմատեսակի փոխանակումը:

Մինչև մարտի 1-ը վերջացնել դյուղգործիքների և մեքենաների վերանորոգությունը: Նույն ժամկետին վերջացնել գյուղատնտեսական բարդ մեքենաների ոգտագործման որացուցային պլանների կազմումը, քննարկելով այդ պլանները կոլտնտեսականների ժողովներում և գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններում:

Մինչև մարտի 1-ը հաշվառում կատարել են սուուգել քաշող ուժի վիճակը, վերացնել դիմագրիությունը և խստագույն պատասխանառությունը սահմանել լծկան անսառուների խնամքի գործում, միջոցներ ձեռք առնել պաեղծելու կերի Փոնդեր, պատրաստել լծառարք և այն:

Մինչև մարտի 15-ը վերջացնել առուների, ջրհանների և քյահրիզների մաքրումն ու վերանորոգումը: Կազմել վոռոգման պլաններ և մարտի 15-ից վոչ ուշ հասցնել այդ պլանները կոլտնտեսություններին և առան-

ձին տնտեսություններին: Հատուկ աչալըջություն ցուցաբերի ջրողագործման հարցում, հէշելով, վոր կուպակն իր քայքայիչ աշխատանքի փորձերից մեկնել հենց այդ ասպարիզում ե անելու:

Բարձր բերք ստանալու համար գյուղակրիուրդը պետք է ապահովի սերմերի ժամանակին և լիովին գտումն ու ախտահանումը, պարարտանյութերի կանոնավոր ողտագործումն ու բայն կիրառումը, ինչպես նաև դաշտերի համատարած մաքրումը մոլախոտերից (մնասակար բույսերից), վերջիններս այրելու և այլ միջոցով:

Բերքատվությունը բարձրացնելու համար հսկայական նշանակություն ունի ցանքսի նորմերի և ցանքի ժամկետների պահպանումը:

Այդ գործի վրա գյուղխորհուրդները պետք ե հատուկ ուշադրություն դարձնեն, բնակչության ցանքի ժամանակը:

Բերքատվության բարձրացման վճռական լծակներն են՝ սերմնափոխության կիրառումը, սերմերի վորակի բարելավումը և տեսակավոր սերմերի գործածությունը:

Գյուղխորհուրդները պետք ե ամեն կերպ աջակցեն ցանքի հետ կապված ձեռնարկումների իրագործմանը, աջակցեն՝ կցելու բրիգադներին ցանքսաշրջանառությամբ ընդդրուելու աջակցությունը առանձին տեղամասերը, աջակցեն կազմակերպելու և զար-

գացնելու սերմնաբուժության գործը կոլտընտեսություններում և այլն:

Այդ ձեռնարկումները հաջողությամբ կիրառելու համար գյուղխորհուրդները պետք է ապահովեն մասսայական ագրո-տեխնպապագանդայի ծավալումը, թույլ չտալով ագրոմինիմումի կիրառման թերագնահատություն անհատական տնտեսություններում:

Պատրաստելով և վերապատրաստելով ագրոլիազորների կադրեր, գյուղխորհուրդները պետք է զեկավարություն և հսկողություն ունենան ագրոլիազորների աշխատանքի վերաբերմամբ:

Գյուղխորհուրդները պետք է լավ հիշեն կուսակցության ու կառավարության դիրեկտիվն այն մասին, վոր՝

«Արդեն յեկել ե ժամանակը, յերբ անտեսության աճման ասպարիզում ցանքսի տարածությունն ընդարձակվելուց մենք պետք ե դիմենք բերքատվությունը բարձրացնելու պայքարին, մի պայքար, վոր զարգացման ներկա շրջանում հանդիսանում ե պլանավոր կենտրոնական խնդիրը գյուղատնտեսության բնագավառում»:

(ԽՍՀՄ-ի ԺԿԽ և Համկոմկուսի (բ) ԿԿ-ի վորոշումից):

Անդրկովկասի Ռողովրդական կոմիսարների Խորհրդի և Համկոմկուսի (բ) ԿԿ-ի կոմի կողմից հրասարակված և հատուկ վորոշում, ուր նշված են այն բոլոր ձեռնարկումնե-

բը, վորոնք անհրաժեշտ են Անդրկովկասում
բերքատվության բարձրացման խնդիրը լուծե-
լու համար:

Դյուզիսորհուրդները պետք են մանրազնին
կերպով ուսումնասիրեն՝ այդ վորոշումը և
հաստատուն կերպով ղեկավարվեն նրանով ի-
րենց ամենորյա աշխատանքում՝ գարնանացա-
նի նախապատրաստման և կիրառման աշխա-
տանքները ղեկավարելու ուղղությամբ:

Դյուզիսորհուրդները պետք են իմանան և
լայն կերպով բացատրեն կոլտնտեսականներին
և մենատնտեսներին, վոր նոր որենքի հրատա-
րակությամբ սահմանվում են պետությանը
հանձնվելիք հացի կայուն նորմեր, վոր կոլտն-
տեսությունների և մենատնտեսների համար
լայն հնարավորություն և ստեղծվում լավորակ
աշխատանքի միջոցով հասնելու բարձր բերքի
և ստանալու ավելի շատ հացահատիկ՝ իրենց
արտադրական և սպառողական կարիքները
բավարարելու համար:

7. Գարնանացանի կամպանիան վճռական
նշանկություն ունի նաև Անդրկովկասի զյու-
ղատնտեսության մի ուրիշ կարևորագույն
նյութի զարգացման համար՝ սոցիալիստական
անասնաբուծության համար:

Կերի բազա ստեղծելու խնդիրը պետք է
լուծվի հիմնականում հենց գարնանացանի
կամպանիայի ընթացքում:

Դյուզիսորհուրդները պետք են առանձին
ուշադրություն դարձնեն խոտարույսերի և

կերի արմատապաւզների ցանքով պլանը կա-
տարելու վրա:

Դյուզիսորհուրդների ուշադրության կենտ-
րոնում պետք է դրված լինի անասնաբուծա-
կան խորհունտեսությունների և կոլտնտեսա-
կան ապրանքային Փերմաների ամրապնդման
խնդիրը, բեզմնապլուման կամպանիա անցկաց-
նելը, խոտհունձի հետ կապված նախապատ-
րաստական աշխատանքները, անասուններին
յայլաղ աեղափակուելու գործի կազմակերպումը
և դրա հետ կապված անհրաժեշտ ձեռնարկում-
ների մշակումը և այլն:

ԻԱԿ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Ե ԳՅՈՒՂԵՌՀՈՒՐԻՔ
ՀԱԶՈՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐԵԼ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԳԱՐՆԱՆՑԱՆԻ ԱՍՊԱՐԻՁՈՒՄ

Դյուզիսորհուրդն այդ կարող է կատարել՝
իր մասսայական աշխատանքը լայն կերպով
ծավալելու միջոցով։ Դյուզիսորհուրդը պետք
է համախմբի իր շուրջը կոլտնտեսական և
չքավոր—միջակային մասսաների լավագույն
մասը, պետք է աշխուժացնի խորհրդի բոլոր
սեկցիաների աշխատանքը, կազմակերպի պատ-
գամավորկան խմբեր կոլտնտեսություննե-
րում, խորհրդական խորհրդական պատրա-
գամավոր բրիգադում և նրանց միջոցով կա-
տարի իր աշխատանքը։

Դյուզիսորհուրդը պետք է ակտիվիստնե-
րին, սեկցիաների անդամներին և պատգամա-

Վորական խմբերի անդամներին կցի առանձին աշխատանիքների, հաշվետվություն լսի նրանցից և գործնական վորոշումներ ընդունի կամպանիայի ընթացքում յերևան յեկած քերությունները վերացնելու շուրջը:

Փորձը ցույց է տալիս, վոր այն գյուղխորհուրդները, վորոնք կատարել են իրենց աշխատանքը՝ հենվելով սեկցիաների և պատգամավորական խմբերի վրա, կոլտնտեսական, կոմյերիտական և կանանց ակտիվի վրա, վորոնք աչալուրջ են յեղել դասակարգային թշնամունկամմր, ժամանակին են կատարել հիմնական տնտեսա—քաղաքական առաջադրանքները:

Գյուղխորհուրդին պետք է լայն ոգնություն ցույց տան ստուգիչ բրիդադները, վորոնք կազմակերպվում են գյուղխորհուրդների կողմից՝ ըրջանի լիազորի ղեկավարությամբ և վորոնց խնդիրն ե՝ տեղերում ստուգել նախապատրաստական աշխատանքի վիճակը և ոգնություն ցույց տան գյուղխորհուրդին՝ գարնանացանի կամպանիան նախապատրաստելու և անցկացնելու գործում:

Գյուղխորհուրդների հաջող աշխատանիք կարևորագույն պայմանը՝ գյուղում, կոլտընտեսություններում լայն մասսայական քացարական աշխատանիք ծավալելն է:

Պլանները, արտադրական առաջադրանքները և բոլոր նախապատրաստական ձեռնար-

կումները պետք ե լայն կերպով մշակվեն ու քննարկվեն ակտիվ կոլտնտեսակամների ժողովներում, գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններում, կանանց պատգամավորական ժողովներում և այլն:

Գյուղխորհուրդը պետք է ձգտի այն բանին, վոր յուրաքանչյուր չքավոր ու միջակ հասկանած և յուրացնի առաջիկա գարնանցանի կամպանիայի նշանակությունը, այն ձեռնարկումների նշանակությունը, վորոնք անցկացվում են գյուղում:

Կամպանիայի հաջող կիրառման վոչ պակաս կարևորագույն պայմանն այն է, վոր կուսակցական և խորհրդային վերադաս մարմինները՝ ժամանակից և ոպերատիվ դեկավարություն գույց տան գյուղխորհուրդների աշխատանիքներին: Այդպիսի դեկավարությունը պահանջում է, վոր այդ մարմինները ժամանակին և ճիշտ ինֆորմացիա ունենան տեղերում անցկացված կամպանիայի ընթացքի մասին:

Ուստի և գյուղխորհուրդի վրա, վորպես նրա հիմնական խնդիրներից մեկը, գրվում և այդ ինֆորմացիան կազմակերպելու խնդիրը: Գյուղխորհուրդը պետք է ճշտապահությամբ, սահմանված ժամկետին և սահմանված ձևով տեղեկություններ տա ըրջոծկոմներին և կենտրոնական մարմիններին տեղերում կատարված առանձին աշխատանքների մասին: Այդպիսի ինֆորմացիան ամենից առաջ անհրա-

ԺԵՂՄ Ե ԳՅՈՒՂԻՍՈՐՀՐԴԻՆ, ԻՆՉ ՀԱՎՈՎ, ՎՈՐ ԱՅՔ
ԻՆՓՈՐՄԱԳԻԱՆ ՀԵՂՄԱՋՆՈՒՄ Ե ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՂԻՍՈՐՀՐԴՆԵՐԻ աշխա-
տանքներին ցույց տրվող զեկավարությունը,
ինչ ՀԱՎՈՎ ՎՈՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ մարմիններն
այդպիսով ավելի գյուրությամբ միջոցներ են
ձեռք առնում կամպանիայի ընթացքում
յերեան յեկած թերությունները վերացնելու
համար, թերություններ, վորոնց վերացնելը
գյուղարհրդի ուժերից ու հնարավորություն-
ներից դուրս կլինի:

Անդրկովկասի գյուղխորհուրդները յե-
րեք բայլշեկլյան գարուն են անցկացրել և ահա
գին փորձ են ձեռք բերել գարնանացանի հա-
խապատրաստումն ու կիրառումը կազմակեր-
պելու ասպարիգում:

Այդ փորձի հիման վրա, հաշվի առնելով
անցյալ կամպանիաների սխալներն ու թերու-
թյունները, սոցմբցման ու հարվածայնու-
թյան հիմունքով դուրս վռնդելով կոլտնտեսու-
թյուններից ու խորհուրդներից կուլակներին
և նրանց գործակալներին, այն ե՝ մենշեկ-
ներին, դաշնակներին, մուսավաթականներին
և ամեն տեսակի հակախորհրդային տարրե-
րին, դուրս վռնդելով լոդրներին, խարերա-
ներին ու ժուլիկներին, անշեղորեն անցկացնե-
լով կուսակցության գլխավոր գիծը և անհաշտ
պայքար մղելով ամեն տեսակի թեքումների
դեմ, գյուղխորհրդը պետք է ապահովի յերկ-

րորդ հեգամյակի առաջին տարվա գարնանա-
ցանի կամպանիայի հաջող կիրառումը:

Գյուղխորհուրդները պետք է փետրվարը
դարձնեն հարվածային ամիս այն հաշվով, վոր
մինչև մարտի մեկը հիմնականում վերջացնեն
գարնան նախապատրաստական աշխատանի-
ները:

Գյուղխորհրդները պետք է հիշեն, վոր
համաձայն Անդրկենտգործկոմի հունվարի
27-ի վորոշման, այն գյուղխորհրդները,
վորոնք ճեղքվածքներ թույլ կտան կամպա-
նիայի պլանի կատարման մեջ, վորոնք թույլ
կտան առանձին արտադրական առաջադրանք-
ներ չկատարել, կամ կատարել վոչ ժամանա-
կին, կհամարվեն կուլակների ազդեցության
տակ գտնվող գյուղխորհուրդները, վորոնք
դավանանել են բանվոր դասակարգին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0220807

39 695

Գի՞նը 25 ԿՈՊ.

Տելուկ, Խմբագիր Թ. Զենյան
Սբրագրիչ Հ. Մատիկյան
Հանձնված և արտադրության 5 մարտի 1933 թ.
Մառադրված և ապագրելու 27 մարտի 1933 թ.

Քլաֆ. 8088 (Բ) Գատվեր 616. Հրատ. 2516. Տիբաժ 1500.